

5. Յետ պաշտօնական աւարտման՝ դեռ Բարիզ կը մտայ « ցվերջ տարւոյս », որ և կ'երկաւ րաձգուի մինչեւ յաջորդ Մարտ, վերջացնելու համար Պետական Մատենադարանին մէջ իրեն յանձնուած գործը. (Նմկ. Հիւրմ. Արքաւօր առ Հ. Պետր. Միկեակեան, 1864 Նոյեմբեր 10), « զի աւարտեալ գրանկ հայ գրչագրաց գրատան քաղաքին՝ աոցէ գվարձս աշխատութեանն ». (Նմկ. Հիւրմ. Արքաւօր առ Հ. Օրսենտիոս, 1864 Օգոստոս 22):

6. Ըստ դիւանական թղթոց՝ հաւանօրէն Մայիսին է որ Բարիզ կը մեկնի:

9

ՏԵՍՈՒՉ

Հ. ՀՄԱՅԵԱԿ ՊԱՊԻԿԵԱՆ՝

1865 ՀՈԿՏԵՄԲԵՐ 22 — 1870 ՅՈՒԼԻՍ 24²

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ չ. ՊԵՏՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ՝ շար. ց1867 Օգոստոս 19 (ցմամ):

ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ

ՄԱՏԱԿԱՐԱՐ չ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ՝ շար. ց1873.

ՈՒՍՈՒՑԻՉ

չ. ԱԼԵՔՍԱՆՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ 1865 Սեպտեմբեր 11. — չ. ՍԱՄՈՒԷԼ ԳԱՆԹԱՐԵԱՆ՝ 1867 Սեպտեմբեր 9.

ԿԱՐԵՒՈՐ ԵՄԵՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հ. Օրսենտիոսի մեկնումէն շատ քիչ օրեր յետոյ, այն է՝ Հ. Հմայեակի առժամեայ փոխանորդութեան առջի օրերուն՝ տեղի կ'ունենան նշանակալից գործեր ի նպաստ ֆարիզեան վարժարանին և ի պատիւ Միխիթարայ Տանը:

Հիւրմիզեան Աբբահայր այդ օրերուն ֆարիզ կը գտնուէր՝ գոհացնելու համար աշակերտները, որոնք նախորդ տարիէն ի վեր ի սրտէ կը փափագէին իրենց պարզեաբաշխութեան հանդէսին համար, մանաւանդ որ աւարտող աշակերտներ ալ կային և ինքը խոստացեր էր: Բայց ասկէ աւելի՝ Աբբահայր գլխաւոր նպատակն էր ձեռնարկներ ընել վարժարանին ուսումնական մակարդակը բարձրացնել տալու՝ վանքի խնամակալաց ժողովի փափագին համաձայն: Ուստի կը կատարէ հոն այդ ուղղութեամբ դիմումներ կրթական Նախարարութեան մօտ: Յաջողութեան յոյսերու բողբոջումին սպաւորութիւնները կը գտնենք իր մէկ թղթակցութեան մէջ այսպէս. « Գալուստ իմ այսր չեղեւ ընդունայն, զի խօսեցեալ ընդ մեծի Հազարապետին Հասարակաց կրթութեան, յարմարեցաք այնպէս՝ զի և մանկունք վարժարանիս մերոյ հաւասար աշակերտաց լիտէից կարացեն առանց այլոց նախընթաց քննութեանց՝ ընդունելի լինել ի բարձրագոյն ուսումնարանս, և ի կատարածին ընդունել զՏիբլում. և սպասեմք յաւուրս յայտոսիկ առնուլ զրով ի հազարապետէն զվճիւն, զի խոստացաւ տալ ». (Նմկ. Հիւրմ. Արքաւօր առ Հ. Յովնանեկ Սորկոճեան, 1865 Օգոստոս 5):

Խնդիրքը յաջողութեամբ կը պսակուի՝ 1865 Օգոստոս 11-ի և 18-ի միջեւ, և Աբբահայրը ուրախութեամբ կ'աւետէ անմիջական թղթակցութեան մը պահուն առ Հ. Աթանաս Ազարեան՝ գրելով այսպէս. « Ի Բարիզ յաջողութեամբ վճարեցի զգործս իմ, նորագոյն շնորհս ընդունելով ի տեսութենէ տեղւոյն՝ կարելոյ զընտիրս և զարժանաւորս յաշակերտաց վարժարանացս յղել ի համալսարանս ի բարձրագոյն ուսմունս, և ի կատարածին նոցա զտիբլում որպէս զաշակերտս այլոց բնիկ վարժարանաց տեղւոյն ». (գր. 1865 Սեպտեմբեր 14): Իսկ Հ. Անանիա Ճելալեանի կ'ըսէ, թէ « բազում մարդասիրութեամբ ընկալան զիս պաշտօնեայք պետութեան և հաճեցան ի կատարել զխնդիր իմ յօգուտ աշակերտաց վարժարանացս. և յետ ելիցն իմ անտի հաճեցեալ է և կայսր ամբառնալ ի բարձրագոյն կարգ զպատուանշան լեգէնական պատուոյն ». (գր. 1865 Սեպտեմբեր 15): Իսկ աւելի հետաքրքրականը հետեւեալ վաւերաթուղթն է, ուր՝ բաց ի մանրամասնութիւններէ յաջողութեանց շուրջ՝ կը հաղորդուին Պետութեան կողմանէ եղած պատուաբեր նուէրներ վանքիս